նէ՝ յաջողուածին". Իսկ յանհամբերու-թենէ պտուղ գտան, և զի ամենեցուն է ժամ և ժամանակ, որպէս ժամանակ սերմանելոյ, նոյնպէս և ժամանակ հնձելոյ, յանհնարինս իմն է կամել հնձել՝ մանաւանդ հակառակ բնութեան, առանց սերմանելոյ և ՚ի հունձս հասանելոյ ։

Ուրեմն ՚ի Տարեդարձիս յայսմիկ մեծաւ յուսով ակնկալեալ ՚ի տես արդիւնաւոր սերմանեալ անցելոյ ամին առաջնոյ բարձու իշխանութեան վեհափառութեան Ձերոյ՝ անշուշտ եմք ամ ըստ ամէ՝ ընդ վաստակոցդ բարեաց իբր ընդ միոյ հարիւր և աւելի վայելել զպտուղս փառաւորս. որով քան զԻսրայելացւոցն զփափագելի խոստումն երկրին Աւետեաց բղխեցելոյ կաթին և մեղու, կրկին երջանիկ կենաց ստեաց և հանդերձելոյն, ո՛չ յանուն և ՚ի համբաւ միայն հրճուիլ է մեզ և փառաւորիլ, այլ իրօքն և արդեամբքն, որով ստուգութիւն իսկ ճշմարտութեան բանիցս հռչակ հարեալ փայլեսցի՝ եթէ արդարև զելս կենաց գոլով պատրաստեալ առաջին ամ բարձու իշխանութեան Ձերոյ, որպէս և ասէ, "Ելք իմ են ելք կենաց, և պատրաստին կամք ՚ի տեառնէ". ո՛չ առ ո՛չինչ և ո՛չ ապարդիւն ելեալ էր ՚ի չու թէ և անդարձ, այլ թողեալ զյիշատակ քաղցր արգասեացն, որով և բարձր անուն և ցանկալի յիշատակ սրբազնագոյն Վեհափառութեան Ձերոյ ոչ միայն փառաւորապէս հանգչեսցի յերախտագէտ ՚ի սիրտս իւրաքանչիւրոյ հայկազանց ներկայից և ապագայից, այլև՝ որ մեծն է՝ շքեղ իմն և հարուստ էջս կալեալ ՚ի թերթս կենաց անցից և գործոց ազգային պատմութեանց մերոց ևս օտարաց, անջնջելի իմն կանգնեսցէ և հաստատեսցէ զարձան յաւիտենական վեհ պարծանաց և վսեմ փառաւորութեանց ազգասէր և հայրենասէր գործոցդ և ձեռնարկութեանց ։

Ուստի փափագելի իմն է և արժելի համայն Ա. Միաբանութեանս ՚ի կողմնէ ընդհանրութեան ամենասիրելի և պատուական ազգայնոցս՝ այժմէն վայելեալ զանխոնջ աշխատասիրութեանցդ զարդիւնս՝ ևս ՚ի հաւաստիս ակնկալութեանցն ապառնի բարեաց բազմաց միաձայն գոչել. "Կեցցէ Վեհափառ տէր մեր և Հայր, կեցցէ Գէորգ Դ. Կաթուղիկոս ամենայն Հայոց" ։

---

## ՈՒՂԵՐՁ

### Ա.Տ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ՏԷՐ ԳԷՈՐԳ Դ.

Ի դիմաց Հայ մանկտւոյ Կարապետեան եւ Ազգային Հոգեւոր Ուսումնարանին Հայոց Ախլցխայ, 1868, 19 սեպտեմբերի

Ոհ քաղցր է մեզ, Տէր Վեհափառ
,,Երանութիւն եւ արտասուք''.
Զոր յիշատակք խնկաւէտ,
յուզեն ի սիրտ, յոգիս պատուք,
Քոյդ Արարատ յաստեղ իջող
ի լոյս, ի փայլ, պճնէ ճակատ,
Այլ մեզ մանկտւոյ տխուր ի քող
Նստի յաշխար, ու յանապատ,
անլոյս, եւ անլոյս,
քանդնեցեալ ի գոյժ,

Տատրակ ի քոյ սուրբ բուրաստան
կարապն ի նազ զայ զի անուշ.
Այլ մեք յաղէտ առ մեր որրան
կորուսեալ խինդ եւ կեանք քնքուշ.
ընդ սիրտ բախում. .
ընթանայ ճուր,
ս՛իրտ կարեվէր
ի ցաւ ճեծէր.
եւ ասէր,
,,Տէ՛ր իմ, զի ոչ
ակն Քոյ յիս հայեցի''.

Եւ յայս հառաչ խնում սրտի
երկիր ծածկեալ էր յիմս սգաց.
Անձ. ժամուց գաւառքուն ոգի
ընդ ծիր երկնից զնայր նանանչ,
յանկ առծ ագռս ի այլ,
ի ծայր ողբերգ
ծիրանիս արկեալ.

Եւ սուրբ հաւատք ձեռօք ամբիծ.
պսակ ածեալ զգլխոյդ, Հա՛յր,
Ի յարփենեացն անդ դարպասից,
ազգիդ Հայոց զօրլ հովուատ
Եւ խոյն յաւուրս
ի յար ողբերգ,
զայս յառեալ ի Քեզ
մանկտին Եւսմեան
ի ցաւ այն կեալ
հեծեծէ անձայն.
,,յաւերժացո, մեզ
Տէր մեր Վեհափառ
զխտութեան սուրբ սիրոյ
իծիլ ողկոյզ,
որց կամք ծարաւի
յուլ՛ս ալի''.

Ով ուրեմն, ընկալ, Ո Հայր.
զայս նուէր Արարատայ.

Արձագանգ Հայաստանի եւ քնարերգու Մասեաց
Եղիշէ վարժապետ Մեծամօրեան

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մասիս պատուական լրագրոյ 854 եւ 55 թի-
ւերումն մէջ Հնդկաստանի մեր սիրելի ազգայնոց այժ-
մեան վիճակին վերայ ի Հնդկաստանէ ուղղեալ ցա-
ւալի նկարագրութիւն մի կարդացուեցաւ.

Վեհափառ Կաթուղիկոսը թէեւ կանխաւ ա-
մենայն առաջնորդաց Ռուսաստանի եւ Պարսկաս-
տանի՝ բացի հայրապետական առաջին օրհնութեան
կոնդակէ, շրջաբերական կոնդակներ եւս ուղար-
կած էր. քաջարթուն հսկողութիւն մասնաւորել
իւրեանց խնամոց հաւատացեալ Հայկազն հօտից ի
դաստիարակութիւն եւ ի լուսաւորութիւն Հայոց
մանկտեաց դպրոցներ բանալ եւ հայրենի ու օտար
լեզուաց եւ կարեւոր գիտութեանց ուսմունքը
ծաղկեցնել եւ զարգացնել. անարժան եւ անուսում
մըն անձինք չ՚ձեռնադրել եւայլն եւայլն. Այս ան-
գամ եւս Մասիս երկու թերթը յատուկ կոնդակաւ
առաքեց Պարսկաստանի եւ Հնդկաստանի Առաջնորդ
Տէր Մովսէս Արք Եպիսկոպոսին՝ պատուիրելով որ
քննէ կամ անձամբ զնալով ի Հնդկաստան եւ կա-
մի հաւատարիմ մարդոյ ձեռօք հասու լինի թէ
արդարեւ այդ ցաւալի դրութեան մէջ են Հնդկա-
հայք. եւ ըստ կարելւոյն դարման եւ խնամք տա-
նէ, եւ փութով տեղեկութիւն տայ Նորին Վե-
հափառութեան. այսպիսի ազգային հսկողութիւն-
ներուն ինչ հաստիճանի օգտակար եւ հարկաւոր
եղածին վրան առ այժմս երկար չեմք խօսիր. որ-
հորդորելով ամենայն պատուական լրագրաց որ
ըստ կարի ջան ի գործ դնեն այսպիսի նորածին
երախտախնութեանց առջեւն առնել. որպէս զի մեր
հայրենազուրկ ժողովուրդը եւս վայելէ սոյն հայ-
րական խնամակալութիւնը, զոր կտրածէ Վեհա-
փառ Հայրապետը իւր մեծական հօտի վերայ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ